

ՀՀ-ում տնտեսական նորմատիվները բավական կարճ ժամանակահատվածում անցել են զարգացման երկար ճանապարհ: ՀՀ կենտրոնական բանկին բանկերի գործունեության տնտեսական նորմատիվների սահմանման լիազորություններ տրվեցին դեռևս 1993թ., երբ ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքը: Նշված օրենքի 34-րդ հոդվածի հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի 1994թ. մայիսի 26-ի թիվ 37 որոշմամբ սահմանվեցին առևտրային բանկերի գործունեության տնտեսական նորմատիվների համակարգը, դրանց հաշվարկման մեթոդները, սահմանային մեծությունները եւ դրանց խախտումների դեպքում կիրառվող պատժամիջոցները:

1994թ. մարտի 30-ի թիվ 10 որոշմամբ սահմանվեց կանոնադրական կապիտալի նվազագույն չափը: Այսպես, նոր գրանցվող բանկերի համար այն կազմում էր 100 հազ. ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ, ընդ որում՝ մասնաճյուղեր ունեցող բանկերի համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը պետք է մեծացվեր յուրաքանչյուր մասնաճյուղի համար 10 հազ. ԱՄՆ դոլլարին համարժեք դրամով: Գործող բանկերի համար սահմանվեցին կանոնադրական կապիտալի համալրման հետեւյալ ժամկետացանկը.

- ✓ 1994թ. հուլիսի 1-ից՝ 15 հազ. ԱՄՆ դոլլար,
- ✓ 1994թ. հոկտեմբերի 1-ից՝ 40 հազ. ԱՄՆ դոլլար,
- ✓ 1995թ. հունվարի 1-ից՝ 70 հազ. ԱՄՆ դոլլար,
- ✓ 1995թ. ապրիլի 1-ից՝ 100 հազ. ԱՄՆ դոլլար:

Սակայն մի շարք բանկեր, չկարողանալով պահպանել այս ժամկետացանկը եւ համալրել կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը, դադարեցրին իրենց գործունեությունը:

Այնուամենայնիվ՝ Կենտրոնական բանկի կողմից կանոնադրական կապիտալի վերը նշված նվազագույն չափերի սահմանման արդյունքում 1994թ. ընթացքում ՀՀ տարածքում գործող բանկերի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը (կապիտալը) աճել է 32 անգամ եւ 1995թ. հունվարի 1-ի դրությամբ հասել 1369.5 մլն դրամի (գծապատկեր1): Իսկ բանկային համակարգի սեփական միջոցները (ընդհանուր կապիտալը) այդ թվականին կազմել են 4678.2 մլն դրամ:

Տնտեսական հիմնական նորմատիվների համակարգի էական փոփոխություններ տեղի ունեցան 1995թ., երբ ՀՀ ԿԲ խորհրդի ապրիլի 28-ի թիվ 78 որոշմամբ², բանկի «սեփական միջոցներ» հասկացությանը զուգահեռ, գործածության մեջ դրվեցին «բանկի հիմնական կապիտալ» եւ «բանկի ընդհանուր կապիտալ» հասկացությունները: Ընդ որում՝

բանկի ընդհանուր կապիտալը նրա հիմնական կապիտալի եւ այլ ֆոնդերի ու պահուստների հանրագումարն է: Սկսած 1995թ. հուլիսի 1-ից՝ կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվեց 50 մլն դրամի չափով, այսինքն՝ ոչ միայն բարձրացավ, այլեւ արտահայտվեց ազգային արժույթով, ինչը նպատակահարմար էր 1994թ. սղաճի բարձր տեմպերի պայմաններում: Յուրաքանչյուր մասնաճյուղի հաշվով նվազագույն կանոնադրական կապիտալը ենթակա էր մեծացման՝ 5 մլն դրամի չափով: Գործող բանկերին կանոնադրական կապիտալը համալրելու համար ժամկետ տրվեց մինչեւ 1996թ. հոկտեմբերի 1-ը:

Կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նկատմամբ նորմատիվային պահանջների բարձրացման, նորմատիվային դաշտը միջազգային պահանջներին մոտեցնելու շնորհիվ 1995թ. փաստացի համալրված կանոնադրական կապիտալը աճել է 3.97 անգամ՝ հասնելով 4683.8 մլն դրամի: Նույն ժամանակաշրջանում 1995թ. հուլիսի 1-ից կարգավորվող ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 2.2 անգամ՝ կազմելով 7.7 մլրդ դրամ: Կանոնադրական կապիտալի բաժինն ընդհանուր կապիտալում 29%-ից հասել է 61%-ի: Ընդ որում՝ բանկային համակարգի կապիտալացման հիմնական ուղիներից են դարձել օտարերկրյա ներդրումները, այդ թվում՝ «Միդլենդ-Արմենիա» բանկի կանոնադրական կապիտալում, որոնց արդյունքում օտարերկրյա ներդրողների բաժինը բանկերի կանոնադրական կապիտալում 1996թ. հունվարի 1-ին հասել է 46.9%-ի:

Միաժամանակ՝ 11 բանկ չի կարողացել համալրել կանոնադրական կապիտալի նվազագույն չափը եւ ստիպված ինքնալուծարվել է կամ միավորվել այլ բանկերի:

Տնտեսական հիմնական նորմատիվների համակարգի հետագա կատարելագործումը տեղի է ունեցել ՀՀ ԿԲ խորհրդի 1996թ. ապրիլի 12-ի թիվ 78 որոշմամբ³: Մինչ այդ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 1996թ. փետրվարի 23-ի թիվ 35 եւ թիվ 36 որոշումներով տնտեսական նորմատիվների հաշվարկման հիմքում ընկած ընդհանուր կապիտալը բաժանվեց հիմնական (առաջնային) ու լրացուցիչ (երկրորդային) կապիտալների, եւ սահմանվեց դրանց մեջ մտնող տարրերի կազմը:

1996թ. ընդունված՝ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» եւ «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» ՀՀ նոր օրենքներն ուժի մեջ մտնելու հետ կապված՝ անհրաժեշտություն է առաջացել տնտեսական հիմնական նորմատիվների համակարգը համապատասխանեցնել օրենսդրության նոր պահանջներին: Այդ նպատակով ՀՀ ԿԲ 1996թ. օգոստոսի 9-ի թիվ 136 որոշմամբ հաստատվեց «Բանկերի

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Ատենախոսության թեմա՝
Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կարգավորման եւ վերահսկողության նորմատիվային դաշտի կատարելագործման արդի գերակայությունները
Գիտական ղեկավար՝
Վարդան ԲՈՍՄԱՆՁՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Հրանտ ԱՅՎԱԶՅԱՆ
Երեւանի Գլաճոր համալսարանի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի հայրող

Ցուցանիշներ	Աղյուսակ 1.						
	2003թ.			2004թ.		2005թ.	
	Բանկեր	Բանկային համակարգ	ՀՀ ԿԲ սահմանափակ ընկերություններ	Բանկեր	ՀՀ ԿԲ սահմանափակ ընկերություններ	Բանկեր	ՀՀ ԿԲ սահմանափակ ընկերություններ
Ն1 ¹ (Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների հարաբերություն)	29.9	2.6	12.00	33.8	12.00	23.3	12.00
Ն1 ² (Հիմնական կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների հարաբերություն)	28.3	1.1	8.00	32.2	8.00	30.2	8.00
Ն2 ¹ (Բարձր իրացվելի ակտիվների եւ ընդհանուր ակտիվների գումարների հարաբերություն)	45.3	43.7	25.00	47.5	20.00	47.1	20.00
Ն2 ² (Բարձր իրացվելի ակտիվների եւ ցպահանջ պարտավորությունների գումարների հարաբերություն)	111.0	86.1	80.00	101.3	80.00	98.7	80.00


Միաժամանակ՝ լրացուցիչ կապիտալի կազմում ստորադաս փոխառությունների հաշվառումը թույլատրվեց միայն 3 մլն ԱՄՆ դոլլարին համարժեք կանոնադրական հիմնադրամ ունեցող բանկերին:

1997թ. ընթացքում բանկերի ընդհանուր կապիտալը աճել է 47.4%-ով եւ այդ թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 15.7 մլրդ դրամ: Փաստացի համարված կանոնադրական կապիտալը տարվա ընթացքում աճել է 60.6%-ով եւ կազմել 13.7 մլրդ դրամ, որն ընդհանուր կապիտալի 87.1%-ն է, ինչը 7.2%-ով բարձր է, քան տարվա սկզբին: Շարունակվել է օտարերկրյա կապիտալի բաժնի նվազման միտումը՝ 42.8%-ից մինչեւ 38.4%:

Դրական տեղաշարժ է տեղի ունեցել հիմնական եւ լրացուցիչ կապիտալի հարաբերակցության մեջ՝ հիմնական կապիտալի բաժինն ընդհանուր կապիտալում, աճելով 10.4%-ով, հասել է 89%-ի:

«Բանկերի գործունեության

Ցուցանիշներ	Աղյուսակ 2.			
	2006թ.		2007թ.	
	Բանկեր	ՀՀ ԿԲ սահմանափակ ընկերություններ	Բանկեր	ՀՀ ԿԲ սահմանափակ ընկերություններ
Ն1 ¹ (Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների հարաբերություն)	33.7	12.00	34.9	12.00
Ն1 ² (Հիմնական կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների հարաբերություն)	31.7	8.00	32.7	8.00
Ն2 ¹ (Բարձր իրացվելի ակտիվների եւ ընդհանուր ակտիվների գումարների հարաբերություն)	44.2	20.00	41.2	20.00
Ն2 ² (Բարձր իրացվելի ակտիվների եւ ցպահանջ պարտավորությունների գումարների հարաբերություն)	110.2	80.00	106.1	80.00



գործունեության կարգավորման, բանկային գործունեության տնտեսական նորմատիվների կանոնակարգ 2-ը»⁴:

Բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն չափը պահպանելով 50 մլն դրամի չափով՝ հանվեց այն 5 մլն դրամով յուրաքանչյուր մասնաճյուղի համար մեծացնելու պահանջը: Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը եւս փոփոխության չի ենթարկվել, սակայն փոփոխություն է տեղի ունեցել հիմնական կապիտալի տարրերի կազմում՝ այն պակասեցվեց բանկի տված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների գումարի չափով:

Մի շարք մասնակի փոփոխություններից հետո ՀՀ ԿԲ խորհրդի 1997թ. մայիսի 15-ի թիվ 136 որոշմամբ հաստատվեց «Բանկերի գործունեության կարգավորման, բանկային գործունեության տնտեսական նորմատիվների կանոնակարգ 2-ը»՝ նոր խմբագրությամբ: 1997թ. օգոստոսի 1-ից հանվեց հիմնական կապիտալը բանկի տված ստորադաս փոխառությունների գումարով պակասեցնելու պահանջը:

կարգավորման, բանկային գործունեության տնտեսական նորմատիվների կանոնակարգ 2-ը» հերթական անգամ փոփոխությունների է ենթարկվել ՀՀ ԿԲ խորհրդի 1998թ. հոկտեմբերի 21-ի թիվ 205 որոշմամբ⁵: Եական փոփոխություններ են տեղի ունեցել բանկերի ընդհանուր կապիտալի հաշվարկման կարգում: Այսպես, ոչ միայն վերականգնվեց հիմնական կապիտալի պակասեցումը բանկի տված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների գումարի չափով, այլև դրանց ավելացան բանկի ետ գնած սեփական բաժնետոմսերի գումարը եւ գույքի վնասների վերականգնման արժեքը: Բացի այդ, Ն1¹, Ն1², Ն3, Ն4¹, Ն4² եւ արտարժույթի տնօրինման նորմատիվների հաշվարկում հիմնական կապիտալը պակասեցվում է նաեւ այլ բանկերի կանոնադրական հիմնադրամներում կատարված ներդրումների եւ գրավի կամ բանկի նկատմամբ այլ պարտավորությունների դիմաց սեփականացված անշարժ գույքի եւ այլ ակտիվների արժեքի չափով, եթե դրանք չեն օտարվել կամ բանկային գործունեության համար չեն օգտագործվել սեփականության իրավունքը ձեռք բերելու օրվանից մեկ տարվա ընթացքում: Սահմանվել է նաեւ, որ 1999թ. մայիսի 1-ից տնտեսական նորմատիվները հաշվարկելիս (բացառությամբ ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի) լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է հիմնական կապիտալի առավելագույնը 50%-ի չափով, ինչը համապատասխանում է Բազելյան համաձայնագրի դրույթներին:

1998թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է 52.1%-ով եւ կազմել 26.4 մլրդ դրամ: Կանոնադրական հիմնադրամի տեսակարար կշիռը հիմնական կապիտալում նվազել է 9.4%-ով: Փաստացի համարված կանոնադրական հիմնադրամը տարեվերջին


Աղյուսակ 3.

Նորմատիվի անվանումը	26.05.94 թիվ 69 որոշում	28.04.95 թիվ 78 որոշում	12.04.96 թիվ 78 որոշում	09.08.96 թիվ 136 որոշում	15.05.97 թիվ 136 որոշում	21.10.98 թիվ 205 որոշում	11.05.99 թիվ 69 որոշում	31.05.01 թիվ 147 որոշում	06.08.02 թիվ 259 որոշում	01.01.05 թիվ 401 որոշում	06.08.2007 թիվ 433 որոշում
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	100 հազ. ԱՄՆ դոլլար*	50 մլն դրամ	50 մլն դրամ	50 մլն դրամ	50 մլն դրամ	50 մլն դրամ	50 մլն դրամ	50 մլն դրամ	50 մլն դրամ	50 մլն դրամ	50 մլն դրամ
Ընդհ. կապիտալի (սեփական միջոցների) նվազագույն չափը	-	350 հազ. ԱՄՆ դոլլար*	350 հազ. ԱՄՆ դոլլար*	350 հազ. ԱՄՆ դոլլար*	350 հազ. ԱՄՆ դոլլար*	600 հազ. ԱՄՆ դոլլար*	800 հազ. ԱՄՆ դոլլար*	1.300 հազ. ԱՄՆ դոլլար*	1.650 հազ. ԱՄՆ դոլլար*	1.132.000.000 դրամ	2.400.000.000 դրամ
Ընդհ. կապիտալի եւ ակտիվների նվազագույն սահմանային հարաբերակցությունը	4%	6%	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդհ. կապիտալ/ սեփական կապիտալի նվազագույն սահմ. հարաբեր.	-	-	4%	4%	5%	10%	12%	12%	12%	12%	12%
Ընդհ. կապիտալի եւ պարտավորությունների միջեւ նվազագույն սահմ. հարաբեր.	8%	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ֆինանսական կապիտալի եւ սեփական կապիտալի նվազագույն սահմ. հարաբեր.	-	-	2%	2%	3.25%	7.5%	8%	8%	8%	8%	8%
Բարձր իրացվելի ակտիվներ/ցածրահարց պարտավորություններ նվազագույն սահմ. հարաբերակցությունը	20%	-	-	30%	30%	40%	60%	80%	80%	80%	80%
Բարձր իրացվելի եւ ընդհանուր ակտիվների միջեւ նվազագույն սահմանային հարաբերակցությունը	-	20%	25%	25%	25%	25%	15-25%**	15-25%**	20%	20%	20%
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	50%	50%	35%	35%	30%	20%	20%	20%	20%	20%	20%
Բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	-	-	-	100%	100%	80%	60%	60%	50%	40%	20%
Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	-	-	-	10%	10%	10%	5%	5%	5%	5%	5%
Բնակչության ներդրած միջոցների եւ ընդհանուր կապիտալի առավելագույն սահմանային հարաբերակցությունը	1200%	400%	900%	-	-	-	-	-	-	-	-
Կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադրյալ պահուստները	15%	15%	13-15***	13-15***	13-15***	8%	8%	8%	8%	6%	12%
Արտարժույթի տնօրինման նորմատիվը	-	-	-	40%	40%	40%	30%	25%	25%	-	-

* համարժեք գումար դրամով

** տարբերակված է՝ ըստ իրացվելիության գործակցի

*** տարբերակված է՝ ըստ ներդրված միջոցների տարատեսակի եւ պայմանագրային ժամկետի



կազմել է 18.9 մլրդ դրամ՝ տարեկան 37%-ով: Ընդհանուր կապիտալում հիմնական կապիտալի բաժինը 1998թ. ընթացքում աճել է 0.7%-ով՝ հասնելով 90.7%-ի:

Հաշվի առնելով Բազելյան կոմիտեի Անդրկովկասի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային խմբի առաջարկը, 1999թ. հունվարի 1-ի թիվ 88 որոշմամբ՝ ՀՀ ԿԲ խորհուրդը խստացրել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նկատմամբ պահանջները՝ սահմանելով դրա համարման ժամկետացանկ՝ այն հաշվով, որ 2003թ. հունիսի 1-ից այն հասնի 2 մլն ԱՄՆ դոլլարին համարժեք դրամի:

Այս փոփոխության արդյունքում նույն տարվա ընթացքում բանկային համակարգի կապիտալը աճել է 25%-ով եւ կազմել 33 մլրդ դրամ, փաստացի համարված կանոնադրական հիմնադրամի աճ է տեղի ունեցել 20%-ով եւ կազմել 22.9 մլրդ դրամ: Օտարերկրյա ներդրողի բաժինը աճել է 3.1%-ով եւ կազմել 45.1%:

2000թ. ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճը զգալի զիջել է ևսխորդ հիսգ տարիների ընդհանուր կապիտալի աճի տեմպերին: Տարվա ընթացքում ընդհանուր կապիտալի ընդամենը 2%-ով աճը հիմնականում պայմանավորված էր բանկերի շահութաբերության անկմամբ: 31.12.2000թ. դրությամբ՝ բանկային համակարգի ընդհանուր կապիտալի փաստացի մեծությունը կազմել է 33.6 մլրդ դրամ:

Նշված տարվա ընթացքում բանկերի փաստացի համարված կանոնադրական հիմնադրամն աճել է 29%-ով եւ կազմել 29.5 մլրդ դրամ: Ընդ որում՝ օտարերկրյա մասնաբաժինը բանկերի փաստացի համարված կանոնադրական հիմնադրամում նվազել է 2.5%-ով եւ տարեվերջին կազմել կանոնադրական հիմնադրամի 42.6%-ը:

2001թ. ընթացքում բանկերի ընդհանուր կապիտալն աճել է 27%-ով եւ տարեվերջին կազմել 34.7 մլրդ դրամ: Նշված աճը պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2001թ. հուլիսի 1-ից բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափը սահմանվել է 1.300 հազ. ԱՄՆ դոլլարին համարժեք գումար: Բացի այդ, հոկտեմբեր ամսին հիմնադրվեց «Յունիբանկը», ինչը եւս հանգեցրեց բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճի:

2001թ. ընթացքում ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է եղել նաեւ կանոնադրական հիմնադրամի աճով, որը տարվա ընթացքում ավելացել է 45%-ով՝ հիմնականում արտաքին աղբյուրների հաշվին, որոնք նշված տարվա ընթացքում ավելացել են 10.8%-ով՝ կազմելով 56%:

2002թ. հուլիսի 1-ից բանկերի ընդհանուր կապիտալը սահմանված է նվազագույնը 1.650 հազ. ԱՄՆ դոլլարին համարժեք գումար: 2002թ. վերջին ՀՀ բանկերի փաստացի համարված ընդհանուր կապիտալը կազմել է 39.8 մլրդ

դրամ, իսկ փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը՝ 32.7 մլրդ դրամ:

2003-05թթ. ՀՀ բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

2006-07թթ. ՀՀ բանկային համակարգի նորմատիվային կարգավորման դաշտում շոշափելի փոփոխություններ տեղի չունեցան, ինչը վկայում են աղյուսակ 2-ում բերված տվյալները:

1994-2007թթ. ՀՀ բանկային համակարգի նորմատիվային կարգավորման էվոլյուցիան կարելի է ներկայացնել աղյուսակ 3-ի տեսքով:

2008թ. առաջուր ՀՀ առևտրային բանկերի գործունեության կարգավորման նորմատիվների շարքից սկսեցին հաշվարկվել միայն Ն1՝, Ն2՝ եւ Ն2՝ նորմատիվները:

ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվը (ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների հարաբերությունը) 2009թ. կազմել է 28.43%՝ ավելի քան 2 անգամ գերազանցելով սահմանված սվազագույն 12%-ի մակարդակը: Ընդհանուր իրացվելիությունը (բարձր իրացվելի ակտիվների եւ ընդհանուր ակտիվների հարաբերությունը) նույն ժամանակահատվածում կազմել է 34.44%՝ թույլատրված սվազագույն 15%-ի պայմաններում: Ընթացիկ իրացվելիությունը (բարձր իրացվելի ակտիվների եւ ցպահանջ պարտավորությունների հարաբերությունը) կազմել է 140.82%, որն ավելի քան 2 անգամ գերազանցում է սվազագույն թույլատրելի մակարդակը՝ 60%-ը⁶:

Տվյալ պարագայում կարելի է ասել, որ մեր բանկերը ծառայում են ավելի շատ ավանդատուներին, քան վարկառուներին:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները ներկայացված են գծապատկեր 2-ում:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ բանկային համակարգի նորմատիվային դաշտի զարգացումները 1994-2002թթ., հանգում ենք եզրակացության, որ ՀՀ տարածքում գործող բանկերի համար սահմանված պարտադիր տնտեսական նորմատիվների համակարգն ընդհանուր առմամբ անցել է զարգացման երեք փուլ.

- ✓1994-1996թթ.,
- ✓1996-2008թթ.,
- ✓2008թ. առաջուր:

Չնայած տնտեսական նորմատիվների համակարգի հիմքում դրված են եղել Բազելյան համաձայնագրի սկզբունքները, այդուհանդերձ՝ այն էապես տարբերվում էր ինչպես նորմատիվների սահմանային մեծություններով, այնպես էլ մեթոդաբանական մոտեցումներով: Այս տարբերություններից առավել էական էր բանկի կապիտալի կառուցվածքի նկատմամբ պահանջների, ակտիվների ռիսկի գնահատման մեթոդների բացակայությունը: Նշված տարբերությունները մեծապես պայմանավորել են տնտեսական նորմատիվների համակարգի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1994-2009թթ. ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է տնտեսական նորմատիվներին վերաբերող շուրջ 50 որոշումներ՝ չհաշված առանձին բանկերի նկատմամբ տնտեսական նորմատիվների խախտումների համար պատժամիջոցների կիրառման վերաբերյալ որոշումները եւ նորմատիվների համակարգի ու դրա առանձին տարրերի կատարելագործման հանձնարարականներով ՀՀ կենտրոնական բանկի ստորաբաժանումներին ուղղված արձանագրային որոշումները: Հիմնական տնտեսական նորմատիվների կատարելագոր-

ծումը տեղի է ունեցել երեք հիմնական ուղղություններով.

- ✓տնտեսական նորմատիվների կազմի փոփոխություն,
- ✓տնտեսական նորմատիվների սահմանային մեծությունների փոփոխություն,
- ✓տնտեսական նորմատիվների հաշվարկման մեթոդիկայի փոփոխություն:

Ընդ որում՝ այս ուղղություններով տարվող աշխատանքների արդյունքում ձեւավորվել է միջազգային չափանիշներին համապատասխանող նորմատիվային դաշտ, որին բնորոշ է նորմատիվների կազմի օպտիմալ ընտրությունը՝ հաշվի առնելով ՀՀ բանկային համակարգի առանձնահատկությունները եւ բանկային որոշ գործառնությունների զարգացման ցածր մակարդակը:

1. ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, թիվ 2 (2), Երեւան 1994, էջ 44-53
2. ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, թիվ 2 (6), Երեւան 1995, էջ 52-61
3. ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, թիվ 2 (10), Երեւան 1996, էջ 102-111
4. ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, Հատուկ թողարկում, Կանոնակարգ 2, Երեւան 1996
5. ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, Հատուկ թողարկում, Կանոնակարգ 2, Նոր խմբագրություն, Երեւան 1998
6. <http://www.finport.am/view-lang-arm-newsarticle-11432.html>